

ՏԱՅՈՒՆԻ ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կէս տարեկանը 6 բուրլի
Առանձին համարները 7 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մէր հասցէն, Тифлисъ. Редакция «Маскъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆՈՒԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. կաթողիկոսական տեղապետ իրաւունքները. Նախկին Ներքին-Արտա- լից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. իրաւունքական հարց և Պարնէլ. Արտաքին լուրեր. —ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ. —ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ. —ՏԵՂԵԿԱՅՈՅՑ. ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ս. Պե- տրբուրդի հայոց եկեղեցու տան վերանորոգ- ման առիթով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՂԱԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱԿԱԼԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

«Новое Обозрѣніе» լրագրի յուլիսի 21-ի հա- մարում տպւած է Մոսկվայի համալսարանի ի- ռաւարանութեան պրոֆէսոր Իւրի Գամբարովի ուշադրութեան արժանի յօդուածը կաթողիկոսա- կան տեղապետի իրաւունքների մասին: Բողո- ծը կրում է հետեւի վերնագիրը. «О предѣлахъ власти замѣстителя патріарха-католика въ хвѣ армянъ»:

Պրոֆէսոր Գամբարով հրաւիրված է եղել «Но- вое Обозрѣніе» լրագրի կողմից իր կարծիքը յայտնելու այն հարցի մասին, որը այս րօպէիս յարուցված է տեղական հայոց մամուլի մէջ: Այս ներկայացնում ենք ջաղուածօրէն պ. Գամբարովի յօդուածը:

Փատական հիմքը բանական է համար տեղա- կալի իրաւաբանական դրութեան մասին, ծա- ուայել են, ինչպէս յայտնի է, սրբազան Երեմիայի մի քանի գործողութիւնները, ինչպէս կարգա- դրութիւններ կաթողիկոսի անմիջական հսկողու- թեան տակ գտնվող հողերը ճեմարանի վերաբեր- մամբ, և սինօդի մի քանի նոր անդամների կա- ուավարութեան հաստատութեանը ներկայացնելու վերաբերմամբ: Այդ գործողութիւնները օրինա- կանութեան հարցը բաժանեց հայոց մամուլը եր- կու բանակների. մինում գտնվում է «Մշակ» լրագիրը և «Մուրճ» ամսագիրը, իսկ միւսում՝ «Արձագանքի» և «Նոր-Գարի» խմբագրութիւննե- ռը: Երկու վերջին օրգանները օրինական չեն հա- մարում սրբազան Երեմիայի գործողութիւնները, պնդելով որ հայոց եկեղեցու կառավարութեան վերաբերմամբ կազմված 1836 թվ. «Պօլօժնիէն» չէ ընդունում տեղա կալի պաշտօնը, և յիշում

է միմիայն սինօդի նախագահի պաշտօնը, որին կարող են պատկանել միմիայն ընկերական (կօ- լէգիական) հաստատութեան նախագահի իրաւունք- ները, բայց ոչ թէ կաթողիկոսական իշխանու- թեան ֆունկցիաները: «Մշակ» լրագիրը և «Մուրճ» ամսագիրը, ընդհակառակն, ընդունում են սրբա- զան Երեմիային ոչ թէ միայն սինօդի նախագահ, բայց և իսկական տեղապետ կաթողիկոսի, որը վա- ռում է կաթողիկոսական իշխանութեան բոլոր եկե- ղեցական-վարչական ֆունկցիաները, և զրկված է միայն կաթողիկոսի իրաւասութեան տակ գտնվող զուտ կրօնական գործերը վարելու ձեռնհասու- թիւնից, որոնք Պօլօժնիէի 945-րդ յօդուածի դո- րութեամբ ոչ մի կերպ չեն կարող լինված լինել առանց կաթողիկոսի: Այդ վէճը, որը ներկայա- ցնում է իրաւաբանական հետաքրքրութիւն այն ժամանակամիջոցի վերաբերմամբ, որը տեսւմ է մի կաթողիկոսի մահից մինչև նորի նշանակվելը և պարունակում է իր մէջ բանակու- ի հիմնական կորիզը: և եթէ «Մշակ» լրագրի այդ հարցի մա- սին յայտնած գաղափարը կատարելապէս տար- բերվում է «Արձագանքի» կարծիքից, դա, ինչպէս կը տեսնենք զբանից է, որ «Մշակը» հետևում է եկեղեցական օրէնսդրութեան ազատ և կենդա- նի մեկնութեան մեթօդին, այն ինչ «Արձագանք» շաբաթաթիւթը հետևում է նոյն օրէնսդրութեան միմիայն բառացի մեկնաբանութեանը: Եթէ օրէնք- ների բառացի մեկնաբանութիւնը կարող էր կա- նօնաւոր համարվել, այն ժամանակ ճիշդ կը լի- նէր և «Արձագանքը» թէօրիան, որը հերքում է կաթողիկոսական տեղապետի իշխանութիւնը և պահանջում է, որ կաթողիկոսի մահից յետոյ մինչև նորի նշանակվելը, կաթողիկոսի իրաւա- սութեան ենթարկված բոլոր գործերը անշարժու- թեան մէջ մնային, քանի որ իրաւ 1836 թվ. «Պօլօժնիէն» մի կողմից ասում է իր 914 յօ- դուածում, որ կաթողիկոսական կոչման յատկա- ցրած իրաւունքներն ու արտօնութիւնները ան- փոխաբերել են, իսկ միւս կողմից, 945 յօդուա- ծում, յատկացնում է այն անձին, որը կաթողի- կոսի մահից յետոյ ընտրւում է ժամանակաւորա- պէս նրա տեղը: միմիայն սինօդի նախագահի ի- ռաւարանները: Համալսարանի օրէնքի այդ դրական կանօնները այն կատարել լուծիւն հետ, որ օրէնքը պահպանում է կաթողիկոսական տեղա- կալի, կամ մի որ և է այլ անձնաւորութեան մա- սին, որին յանձնած լինելը, կաթողիկոսի մահվան

դէպքում, վարել նրա իշխանութեան բոլոր, կամ զոնէ մի քանի ֆունկցիաները, «Արձագանքը» կա- տարակապէս յաջորդաբար և օրէնքի բառացի մեկ- նաբանութեան կանօններին համեմատ, հասնում է եկեղեցական ազմիխտորացիայի իրաւաբանա- կան դրութեան այնպիսի նկարագրին, որը ամե- նից մօտ է անարելիայի (անիշխանութեան) գաղա- փարին, այնպիսի ժամանակամիջոցում, երբ կա- թողիկոսները մէկը վախճանվել է, իսկ նրա յա- ջորդը դեռ չէ նշանակվել: Չը կարողանալով անցնել ոչ սինօդի ձեռքը, որի իրաւասութիւնը ճիշդ կերպով որոշված է Պօլօժնիէում, ոչ էլ ու- ըրել որ և է օրգանին, կաթողիկոսի իրաւասու- թիւնը, որը որոշված է Պօլօժնիէի 914, 927— 935 և 937 յօդուածներում, մի կատարելալ ա- ռողը կը դառնար, եթէ մի տարվայ ժամանակա- միջոցում, մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնն ու հաստատութիւնը, նա այդ ամբողջ ժամանակ, ոչ ոքից չը վարած, ստիպված լինէր օդի մէջ կալված լինել, անտես առնելով այն բոլոր շահերը, որոնք կապված են իր հետ: Բայց զէպի այդ տեսակ առ ու ը դ հասցնում է մեր Պօլօ- ժնիէի միմիայն բառացի մեկնաբանութիւնը, ո- ըր անպայման մերժվում է օրէնքների մեկնաբա- նութեան ժամանակակից թէօրիայով, որը պա- հանջում է գործադրել այդ տեսակ մեկնաբանու- թեան պատմական, լոգիական և ուսումնական եղանակը, և ոչ թէ օրէնքի տէկստի բացառա- պէս բառացի մեկնաբանութեան եղանակը:

Այս պրոֆէսոր Գամբարով բաւական մանրա- մասն կերպով խօսում է այն հայեացքի վրա, որը յայտնում է գերմանացի իրաւագէտ Köhler օրէնքների մեկնաբանութեան եղանակների մա- սին: Հռչակաւոր իրաւագէտի կարծիքով պէտք է նայել օրէնքի վրա ոչ թէ նրա բառացի իմաստի տեսակետից, այլ օրէնքի «կամբի», «զիւտաւորու- թեան», «նպատակի» հայեցակետից, այն նպա- տակի, որին ձգտել էր ուղղում օրէնքը: Այդ նպատակին հասնելու ձգտմանը գեր- մանացի ուսումնականը յատկացնում է վճռո- ղական նշանակութիւն, չը նայած օրէնքի ան- կատար լինելուն, նրա մէջ հանդիպած որ և է հակասութիւններին, որ և է պակասութիւններին, կամ ակամայ լուծիւն այն ու այն կէտի մա- սին:

Այս այդ հայեցակէտն է, ասում է պրոֆէսո- ըր, որը եթէ ոչ լիովին, դոնէ նշանաւոր չափով

գործ են դրել «Մշակը» և «Մուրճը» 1836 թվ. «Պօլօժնիէն» շննկու ժամանակ:

Այս պ. Գամբարով հաւատացնում է, որ «Մշ- յակը» չափազանցութիւն է արել, յատկացնելով Պօլօժնիէի 945 յօդուածի հիման վրա բոլոր վարչական իրաւունքները տեղապետին, սակայն լրագրին ուղղել է իր սխալը իր յօդուածների շարունակութեան մէջ, այնուհետև հիմնելով իր դատողութիւնները ոչ թէ 945 յօդուածի հիման վրա միայն, այլ մեր եկեղեցու վերաբերմամբ ամ- բողջ օրէնսդրութեան նպատակի և ոգու վրա, մասնացոյց անկելով այն աղետալի հետեւեցների վրա, որոնց չէ կարող նպատակ ունենալ օրէնքը, և որոնք կարող էին ծագել, եթէ կաթողիկոսա- կան իրաւասութեան բոլոր գործերը անշարժ դրութեան մէջ մնային կաթողիկոսական գահի թափուր մնալու ամբողջ միջոցում: Այդ հետե- ւեցների վրա մատնելի անկել և «բաւ-կրօնա- կան» ու եկեղեցական-վարչական գործերի մէջ դանազանութիւն անկել, որ ի միջի այլոց պէտք է խոստովանվել, կատարելապէս որոշ- ված է 1836 թվ. Պօլօժնիէում, և որ հերք- վում է «Արձագանքի» կողմից, պէտք է հա- մարել «Մշակի» մատուցած էական ծառա- յութիւններից մէկը: ներկա հարցը պարզեւու գործում: Սակայն հարցի վերջնական լուծումը ոչ «Մշակին» է պատկանում, ոչ էլ մեր մամուլի մի այլ օրգանին: Այդ հարցը պէտք է վճռվի խիստ ուսումնական հետազոտութեան օգու- թեամբ, աւանդութիւնների և պատմական իրո- դութիւնների հիման վրա: Նոյն պահանջը, պրո- ֆէսորի կարծիքով, արել է «Մուրճը» իր լռմ- բազրական յօդուածում, որը հեղինակը համարում է մեր մամուլի ամենալուրջ և ամենաանկախ բնաւորութիւն կրող յօդուած այդ հարցի վե- րաբերմամբ, քանի որ երկու բանակներից ար- դիւնաբերած միւս բոլոր յօդուածները աւելի պօ- լէմիական բնաւորութիւն են կրում:

Յետեւեցելով իր բոլոր ասածները հեղինակը գալիս է հետեւեւ եղապարտութիւններին.

ա) Մենք չենք բաժանում անպայման «Արձա- գանքի» հայեացքը, թէ կաթողիկոսի բացակայու- թեան ժամանակ պէտք է առկա թողնել կաթո- ղիկոսական իրաւասութեանը ենթարկված բոլոր գործերը: Բ) համարում ենք Պօլօժնիէի և «Մշա- կի» խմբագրութեան հետ միասին, անվճարելի կաթողիկոսի բացակայութեան ժամանակ միմիայն

ժամանակ իրաւունք կամ անձամբ ընտրել ի նմա, և կամ այլում տալ զայն վարձու: միայն թէ անթերի հասուցեց հողաբարձուաց զվշատա- կեալ գումարը: Ներքին նորոգութիւն տանն յանձն լիցի ժառանգին: իսկ արտաքինը հողա- բարձուաց եկեղեցեացն: Եւ յաւարտել երկց սե- րընդոցն՝ հաւատարեցի և նոյն տուն ընդ միւսայն, և հասը և ծախք բոլորովին կախելու կայացն հողաբարձուաց ըստ նշանակելոցն ի վերայ:

Այսպէս ամեն ինչ կատարվում է վիճակաւոր եպիսկոպոսի համաձայնութեամբ և հաստատու- թեամբ, կախումն մեծ է և նշանաւոր:

Այսպէս անուսաց Բովանդէս Լազարեանից յետոյ տեղի պիտի ունենար նոր վարչութիւն ե- կեղեցապատկան ստացուածքների համար: Այդ վարչութեան մէջ անդամը պիտի լինէր Լազա- րեաններից անդղանիլը: Այդպէս և եղաւ, բայց սակայն երկար չը տեւեց վարչութեան այս նորա- ձեւութիւնը: Պատմական հանգամանքները նոր ուղղութիւն են տալի ամբողջ գործին: Բովանդէ Լազարեանի վաղահաս և անսպասելի մահը և այդ միջոցում սուրբ աթոռի չարքը կատարվող զիւտաւորութեան բաւականին լուսաբանում են մեզ հետաքրքրող այդ նոր ուղղութիւնը:

Ղուկաս կաթողիկոսը 1799 թվ. ղեկավարելով 27-ին վախճանվում է. կաթողիկոսական աթոռի համար երկան են գալի երեք թեմականներ ի- րանց երեք և միմեանց բացօթյա հակառակ կողմ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵԼԵՅՈՒ ՏԱՆ ՎԵՐԱ- ՆՈՐՈԳՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Թողնելով այդ և սոյնաման ենթադրութիւն- ները մի կողմ, կարեւոր պիտի համարենք մատ- նացուց անել այն խորհրդատու հանգամանքը, որ Բովանդէս Լազարեանը այդ եկեղեցիներին և սրանց ստացուածքների լիազօր տէր չէր համա- ռում իրան երբեք: Եւ իրօք, երբ օրինակ՝ միտք է յղանում նրա մէջ եկեղեցապատկան հողի վրա երկու բնակարան կառուցանելու, նա խնդրամա- տոյց է լինում թեմական իշխանութեանը տալ իրան արտօնութիւն այդ մասին, պայման դնե- լով, որ այդ բնակարանները մտնեն եկեղեցու անվախանութեան մէջ, երբ կը ծածկվին իր արած ծախսերը եկեղեցական արդիւնքից: Բնակարան- ները կառուցանելուց յետոյ նա երկին զինում է թեմական արքեպիսկոպոսին նշանակելով պայմա- նը փոխելու մտքով: Բովանդէ արքեպիսկոպոսը հաստատում է նրա արած նոր առաջարկութիւ- նը: Եւ Լազարեանը իր պայմանագրի մէջ հետե- ւեւ տեղեկութիւններն է տալի. «մինչև ցայսօր մինչ ընկալել ի հասից եկեղեցայն, և ստի- պեալ ի սիրոյ և ի ջերմութեամբ ինչ առ ե- կեղեցի և աղբ մեր՝ նուրբան զնոյն շինուածն ի

յիշատակ սրբոց տաճարացն: Ուստի և կարեւոր համարեալ անել առ յայայն ի կարգ և ի սահ- ման զհասոյթման զօրս ունի ա. եկեղեցին ստանալ ի շինուածոց անալի և ի վայրացն եղելոց առ ընթերիս: Եւ տաճարին Երուսթեան, արարի զսոյն զայս պայմանագրի, և խնդրելի ի բարձր սրբաղ- նութիւնէ Բովանդէայ արքեպիսկոպոսի հայոց Ռու- սաստանի՝ հաստատել զնոյն ըստ հետեւեալը կարգի»:

«Նախ» մինչ ցվախճան կենաց իմոց և կնոջ իմոյ կատարելեայ Բովանդէսեան, այն երկու տունը հանդերձ ամենայն շինուածովքն, նոյն- պէս և հասոյթն որ ի նոցանէ, և ծախքն որ վանն նոցին, եղելին ընդ կառավարութեամբ և իշխանութեամբ մերով: ուստի և պապատուրը ե- կեղեցեացն զմէնջ ունեցին ղեախուռն ըստ անօ- ընթութեանն՝ զոր արարեալ եմք յաղաքս նոցա: «Երբորդ» ղինի մահանաւ մեր երկոցունց, առնան որ յեկանելն յեկեղեցայն անկալին ընդ ձախմէ, հանդերձ նոյն պատշաճեալ շինուածովք (բացի ներքին զարդուցն կամ կահուց), ևս և իւնութեքն՝ որ գտանին ի ներքոյ միւսոյ տանն, նմանապէս և վայրքն որ առ տաճարաւս: Եւ Երուսթեան ի վեր անդը յիշատակեալը, միասոց են ընդ կառավարութեամբ հօգաբարձ ու աւացն և կեղեցեաց, որը պարտին լի- նել չօրը: մին ի մերոց ժառանգորդաց, եր- կուքն ի մերաջնեայ պատուաւոր անձանց, և չորրորդն ի խոհմագոյն քահանայից կամ եկեղե-

ցականաց, որոց վերահասու լեալ ամենայն հա- սից և ծախսոց եկեղեցեացն՝ զարդիւնան բաժա- նեցնել յերիս մասուռն: Զմի մասն կարգեցնել ի թոշակ պապատուրաց եկեղեցեաց ըստ իւրաքան- չիւր աստիճանի՝ հայելով ի ժամանակին հանգա- մանս, ի պահպանութիւնն ի ոքը ի կը զը պ- րոցի ի առ և կը զը եկաւ, ի նորոգումն կամ ի բեղել շինուածոցն, ի պահել դռնապանս կամ պահակապանս, և ի կիր առնուլ վանն ներքին և արտաքին պիտոյիցն եկեղեցեաց: Զերկրորդ մասն ամ յամէ տացն ի դրամատունն արքունական կամ յայլ աղաճով տեղի, առաւելեալ գումարն՝ երբեք երբեք ի գործ դրել ի պէտս նորոգութեան եկեղեցեաց կամ շինուածոց, և կամ վասն շըր- ջապատելոյ քարեայ պարսպաւ զառա- ճարնս: Եւ Երուսթեան, և կամ վասն կահն զն իւր առ նմին շինուածնս պատ- շաճաւորս: Իսկ զերկրորդ մասն ի կիր առցն հողաբարձուց յօդուտ աղքատաց և չքաւոր ան- ձանց հայոց, յորաւակ զգերիս, և յայլ Աստուա- ծահաճոյ գործս, որոց վասն ունիւմ առնել զա- ռանձին կարգադրութիւն:

«Երբորդ» առնան որ յեկանելն յեկեղեցայն ան- կանի ընդ աջմէ, հանդերձ շինուածովքն նոյն պատշաճեալովք, յետ մահուան մերոյ տացի ի բնակութիւն երկացաւորն յարական ժառանգոր- դաց տոմի մերոյ մինչ ցերբորդ սերունդ, ըն- կալեալ ի նոցանէ անփոխով ի վարձ ամի ամի վասն եկեղեցայն զերկու հազար բուրլի: Ունի

զուտ կը օնական դործերը, մինչդեռ եկեղեցական-վարչական դործերը, որոնք յատկացրած են կաթողիկոսական իրաւասութեան, պահանջում են, մեր կարծիքով, որ կատարուած ստանան, որպէս և կաթողիկոսին կենդանութեան ժամանակը Այդ դործերի տեսակին պատկանում են, անտարակոյս, և սինոդի լրացուցիչ անդամներին առաջարկութիւնը կառավարութեան հաստատութեան, նմանապէս և հոգեւոր ձեւարանի դործերի կառավարելը, ք) վերջնական և ուսումնական վճիռը այն հարցի թէ ով է փոխարինում վախճանված կաթողիկոսին, մինչդեռ դժուար լուծելի են համարուած այս բոլորէն՝ բաւականացուցիչ ներկերի պակասութեան պատճառով և դ) մինչդեռ առժամանակ հնարաւոր են համարուած հարցը վճռել յօգուտ այնպէս և անուանված տեղակալի, կամ սինոդի նախագահի, աչքի առջև ունենալով նախ դործնական անհրաժեշտութիւնը, որ կաթողիկոսական իրաւասութեան ֆունկցիաները կատարուած առկա չը մնար և մի որ և է պաշտօնական անձի ձեռքով կատարուած ստանալը, քանի որ այդ ֆունկցիաները յանձնելը սինոդին անհնարին է, նրա պաշտօնավարութեան չափն ու սահմանը ճշդ կերպով որոշված լինելով օրէնքով և ապա աչքի առջև ունենալով, որ «Պօռօքներէն» ոչ մի ուրիշ անձնաւորութիւն չէ յիշատակում, որը կատարուար վարել վախճանված կաթողիկոսի պաշտօնի ֆունկցիաները, բացի այդ անձից, որը նախագահելով սինոդում, հայոց եկեղեցական աւանդութեամբ («Մուրճ» ամսագրի վկայութեամբ) համարվում է մի և նոյն ժամանակ և տեղակալը Զանգազուտի տեղակալի և սինոդի նախագահի անուն մէջ այդպէս ղեկնել նշանակութիւն չունի:

Այդ իր բոլոր ասածներէն հեղինակը եզրակացնում է, որ ուրեմն երկրորդական նշանակութիւն ունի և այն, թէ իր պաշտօնը ստանձնելու համար «տեղակալը» ստացել է հանգուցեալ կաթողիկոսից կօնդակ, կամ ոչ:

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՐՏԱՅԻՑ

Յուլիսի 15-ին

Ամսիս 12-ին, տեղիս հասարակութիւնը ցուելով ճանապարհ գրեց այստեղից Գարաշիշագի շրջանի պօլիցիական մասի պրիստաւ պ. Կ. Չերկեզովին, որը տեղափոխվում էր դէպի իր նոր պաշտօնատեղի՝ Վաղարշապատ: Ահա մի քանի տարի է, որ պ. Չերկեզով վարում էր այդ պաշտօնը Գարաշիշագի գաւառաբաժնում. նա իր ծառայութեան ժամանակամիջոցում այնպիսի արդարադատութեամբ և անուշակամութեամբ վերաբերվեց դէպի տեղական ազգաբնակչութիւնը, որ բոլորովին գրաւեց ժողովրդի սէրն ու համակրութիւնը և նա իր պաշտօնավարութեան միջոցին միշտ հասարակութեան շահերի պաշտպան է հանդիսանցել: Այդ է պատճառը, որ այսօր տեղական ազգաբնակչութիւնը պ. Կ. Չերկեզովին հեռանալու մասին ցաւակցական նշան է ցոյց տալիս և մի

նակիցներով: Միանցից ամեն մէկը միւս երկուսին անողորմ պատերազմ է յայտնում և պայքարը հասցնում է դաժանամեծոքին՝ առանց խղճի, առանց մտածելու թէ՛ փոս փորելով հակառակ կուսակցութեան դէմ, փոս է փորում նոյն իսկ լուսաւորչի գահի տակ: Все классы на карту, սուրբ աթոռից սկսած մինչև վերաբարկի մօրուքը... Հարկաւոր էր գրգռել ինքնիշխան իւաների մոլեռանդութիւնը՝ զրդուում էին, առանց սարսափելու նրանց զոհերի՝ հայ ժողովրդի՝ արիւնից, միայն թէ համեն իրանց փառասիրական նպատակին...:

Թեկնածուները երեք էին. Յովսէփ Արղուսեան թիֆլիսեցի, Դանիէլ Բայազետցի և Դաւիթ Էնէգէթեցի:

Յովսէփ Արղուսեան՝ այդ հայրենասէր այրը՝ մեծ ծառայութիւններ է ցոյց տուած եղել ուսաց տէրութեանը թէ թիւրքական պատերազմների և թէ հայերի Արմէնիայի թերակղզուց դաղթելու ժամանակ, կամ թէ նաև իր միջնորդութեամբ վրաստանի իշխող տան հետ վրաստանը Ռուսաստանին միաւորելու նկատմամբ: Այս պատճառով նա վայելում էր ինքնակալուհու համարում: Երբեք և պետական մեծամեծների բարեկամութիւնը:

Հայաստանի անմիջապէս դրութիւնը հանդիստ չէր տալի Յովսէփին: Նա անդադար բանակցութիւնների մէջ էր հայրենիքի թշուառ վիճակի

և նոյն ժամանակ յայտնում է խորին երախտագիտութիւն դէպի իր նախկին ազնիւ դատաւորը:

Տեղական պօլիցիական բաժնի պրիստաւի պաշտօնը ստանձնեց պ. Բ. Հասան-Ջալալեանց, որը նորիս նոյնպէս Վաղարշապատից տեղափոխվեց Գարաշիշագի գիւղը: Յանկալի է, որ Գարաշիշագի նոր պրիստաւ պ. Ջալալեանց ևս արժանաւոր նոյն պատւին և համակրութեան, տեղական ազգաբնակչութեան կողմից:

Գարաշիշագի տեղական պօլիցիան, իր հաստատութեան հէնց սկզբից մինչև այժմ գտնվում է Գարաշիշագի գիւղում, որը ընկած է Հրազդան գետի ափին, Կօնստանդնուպոլսի տանող ճանապարհի վրա և որը 4—5 վերստ հեռավորութեան վրա է գտնվում այստեղից: Այժմ միջնորդութիւն կայ թէ պօլիցիան և թէ բանտը այդ Գարաշիշագի գիւղից տեղափոխել այստեղ, Ներքին-Արտաքին Բայց սակայն Ներքին-Արտաքին չը կան յարմարաւոր շինութիւններ թէ բանտի և թէ կառավարչական ժամի բոլոր պաշտօնատեղիքի համար: Պօլիցիային յարմար տուն գտնելու համար մի քանի անգամ այստեղ եկած Երևանի նախկին փոխ-նահանգապետ հանգուցեալ Չերկեզովին, որն այցելելով այստեղի մայրականները բոլոր շինութիւնները՝ ոչ մէկին արժան չը տեսնէ վարձելու: Այդ պատճառով միտք կայ նաև նոր շինութիւն շինել տալու Ներքին-Արտաքին կառավարչական մասի համար, բայց չէ գտնվում մի այնպիսի կապալաւոր, որը յանձն առնէր կառուցանելու ամբողջ շինութիւններ, որոնք պիտի կառուցվին ճարտարապետի տեսութեամբ:

Պօլիցիան այստեղ տեղափոխելը մի շատ լաւ դիտաւորութիւն է և նոյն իսկ անհրաժեշտ, որովհետև այստեղ են գտնվում Գարաշիշագի բաժնի հաշտարար դատարանը և այլ ուրիշ վարչական հիմնարկութիւններ, որոնք իրար մօտ լինելով, աւելի դիւրութեամբ կարող են տալ քան թէ դատարանը լինի Ներքին-Արտաքին, իսկ պօլիցիան և բանտը գտնվին 5—6 վերստ հեռու որ և է դիւրում:

Խոտի հոնձը արդէն սկսվել է այս կողմերում: Այդ բուսականութեան պատճառով հացի դինը օրից օր ընկնում է: Անցեալները ցորենի խաւով վարել (30 պոռ) ծախվում էր 20—22 բուլլով, իսկ գարնային՝ 11—12 բուլլով: Այժմ ցորենի պոռը արժէ 60 կոպէկ, իսկ գարնային 35 կոպէկ: Թխած հացի ֆունտը, առաջին տեսակը ծախվում է 3 կոպէկով, իսկ երկրորդ տեսակը՝ 2 1/2 կոպէկ, 10 ձուռ 5 կոպէկ: Միս, պանիր, իւղ, չաքար և այլ կենսական միջոցներ նոյնպէս էլ ծան գին ունեն մեղանում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետեւել № 85 տօնի պատճառով երեքաբարժի օր, յուլիսի 30-ին չէ հրատարակվել, այլ կը հրատարակվի հինգաբարժի օր, օգոստոսի 1-ին:

մասին: Նա վայելում էր հեռի հիւսիսում պատիւ և համարում, հեռուոր հնդկաբնակ աղաւթիցներից ստանում էր առաջարկութիւններ առնել իրանց միլիթաները Հայաստանը գնելու համար... Զուր և նախիր յոյսերը ի դերս եղան, և նա ըսկայեց ձգտել կաթողիկոսական աթոռին, այն աթոռին, որ անգրում էր արարել և տանկաց աթոռութիւնները Յովսէփին անձնաւորութեան մէջ տեսնում էին իրանց սիրելի թշնամուն և ի հարկէ, նրա կաթողիկոսութիւնը նոր նշան պիտի լինէր արիւնահեղ ժողովարարութիւնների: Բայց և այնպէս ուսմական դեպքան թաժարա սուլթանից ստանում է Յովսէփի համար կաթողիկոսութեան հրովարտելը, որը մնաց առանց դործագրելու: Յովսէփի նպակագրութիւնը յանկարծամահ է լինում և բերվում է Էջմիածին միայն թողնելու համար:

Սրա մահից յետոյ էջմիածինեցի ընտրում են Դանիէլին, որի ամենաջերմ կուսակցը Ներսէս Առաքելեանցն էր: Բայց հրաւիրակները դեռ ևս Դանիէլին չէին հասել, երբ թիֆլիսեցիք ընտրում են Դաւիթ Էնէգէթեցուն, կէտ յետադան ունենալով Երևանի խանի հաճութիւնը: Ճանապարհի վրա է առնում Դանիէլը Դաւիթի կաթողիկոսական օժման լուրը: Արիւնահեղ Առաքելեանցն չէ յուսահատվում, և երբ նրա վարժապետ Խամսեցի Գրիգոր կաթողիկոսը պատրիարք է հաս-

կօժօրի մեղ գրում են. «Վերջապէս Կօջօրի հասարակութիւնը միջոց է գտել հաշակաւոր երաժիշտ Անտոն Բուրիշտէյնի պիանոի վրա ամելը լսելու: Մի քանի անձինք պատահամբ իմացան, որ նա ամեն օր առաւօտեան 8 ժամից մինչև 9 1/2 ժամը ամում է, և ահա մէկը միւսին պատմելով՝ հասարակութիւնը սկսեց ամեն առաւօտ հաւաքվել շտաբի անտառում: Փիթօնի «Հրաշխ» հարեան է այդ անտառին, իսկ այն նրա պալիլիօնը, որտեղ դրված է պիանոն, սահմանակից է այդ անտառին և բաժանված է նրանից մի թիթիկ ցանկապատով, և ահա անտառը այդ անկէնում ամեն առաւօտ կը տեսնէ 100 հոգու չափ պարուներ և տիկիներ նստած են խոտերի վրա ստուկալիս ծառերի տակ և շնչաւարտ ուշադրութեամբ հետեւում են հաշակաւոր պիանիստի ամելուն... Պալիլիօնի ահագին պատահանը, որը նայում է անտառին, բաց է և լսողների ակնային հասնում են նուազածութեան մեղք քաղցր, մերթ ուրտալի ձայնի իրանց բոլոր ներութիւններով: Նկարչական տեսարան է մօտ 100 հոգի այլ և այլ դիրքեր բռնած, խոտի վրա, ծառերի տակ են նստած և այդ բազմութեան մէջ տիրում է կատարեալ լուրճիւն. տիկիներ և օրիորդներ իրանց ամառնային գոյնգոյն զգեստները հագած՝ կամ գլբը են կարդում, կամ կար են անում: Բուրիշտէյն ամում է մի պիեսա միւսի ետեւից առանց ընդմիջման և բանաստեղծական, միաւարդոտ հնչիւնների այդ անընդատ հոսանքը խորհրդաւոր պատահանից տեսում է ուղիղ մի ժամ ու կէս: Ուղիղ 9 1/2 ժամին որոշ կերպով լավում է ինչպէս խփվում է պիանոի ծածկոցը, — ամբողջ հասարակութիւնը յանկարծակի տեղից վեր է կենում ու ամենը փոքր առ փոքր ցրվում են իրանց բնակարանները: Բայց այդտեղ էլ յայտնվում է մեր հասարակութեան անկրթութիւնը և բարը ու վարքերի կոպտութիւնը, շատերը, որոնք երկի ոչինչ չեն հասկանում երաժշտութիւնից և միայն «ժողային» հետեւելով են գալիս, բերում են իրանց հետ իրանց չնքին... Ի հարկէ, չնքը վաղվադում, հաշում, իրար հետ կուսում են և խանգարում են երաժշտութիւնը լսելու:

Անդրկովկասում, յատկապէս ուսաց Հայաստանում ճանապարհորդելուց յետոյ, այս օրերս կրկին ուղևորվեց դէպի Պարիզ երիտասարդ հայադէտ պ. Մէյէ, որը ստացել է Պարիզի «Արեւիկեան կենդանի լեզուների ձեւարանում» արեւելեան լեզուների համալսարանական քերականութեան պրօֆեսորի պաշտօնը:

Թէ՛ՕՒՈՍԻԱՅԻՑ մեղ գրում են. «Վերալի, յուլիսի 14-ին հանդիսաւոր կերպով կատարվեց քաղաքիս երկաթուղային կայարանի բացումը: Տասն և հինգ վերստ է մնացել երկաթուղու գծին մինչև քաղաք հասնելը: Յոյս կայ որ սեպտեմբերին զիծը կաւարտվի և երթևեկութիւնը Թէ՛ՕՒՈՍԻԱՅԻՑ և Զանկոյ կայարանի մէջ կը սկսվի: Առևտուրը մեր քաղաքում ընկած դրութեան մէջ է, այնպէս

տատվում Կ. Պոլսում, սրա միջնորդութեամբ և ձեռքով ստանում է Դանիէլի համար կաթողիկոսական հրովարտակ, չը նայելով որ մի փոքր առաջ նոյն հրովարտակը ստացել էր և Դաւիթի դեպքան թաժարայի մշակցութեամբ: Այժմ նոյն հրովարտակը Դանիէլի կողմն էր անցել: Երբեք էր հիւսիսից նրա ստացած տնօրէնութիւնները...:

Էջմիածինը Դաւիթի ձեռքումն էր Դանիէլին մնում էր, կաթողիկոսանալով Ուշիկիւն վանքում, մնալ առանց կաթողիկոսական աթոռի: Սա նորվում է Դաւիթի ինքնակոչութիւնը: Դաւիթ պարտքի տակ չէ մնում. սա էլ իր կողմից նորվում է Դանիէլին ու անգրութեամբ հայածում նրա կուսակցներին: Այս վերջինների թիւից Յովսէփն Գեղարքալիքը փախչում է Ռուսաստան, որտեղ Երևան կաթողիկոսի և Լազարեան եղբարք միջնորդութեամբ ուսաց արքեպիսկոպոստանում է Դանիէլի կաթողիկոսական հրովարտակը: Այսուհետև դործն աւելի կնձու կերպաւորանք է ստանում: Մինչդեռ ուսաց արքեպիսկոպոստանում է Երևանի խանին պաշտպանել Էջմիածին միաբանութիւնը և Դանիէլ կաթողիկոսին, Դաւիթ սուլթանի հրովարտակով իր հակառակորդին և նրա կուսակցներին Էջմիածին է բերել տալիս և բանտարկում Այժմ դործին միջնորդում է վրաստանի կուսակալ Յիցիանով: Սա արշաւում է Դանիէլի վրա, որ այստեղից անցնի դէպի Երևան, ունենալով իր զօրքի մէջ

որ վերջին երկու ամսվայ ընթացքում, իրանց կրած մեղսանքի պատճառով, մօտաւորապէս 20 խանութներ փակվեցան, զլիւսուր, չտալիւսուր կայա՝ ամբողջ փողոցի վրա: Առևտրի անկման պատճառը հացահատիկների հոնձի վատութիւնն է, անձրեկ ուշ գալու պատճառով: Ընդհանրապէս այս տարի ամբողջ Կրիմի հացարդսերի ցանքսերը անաջող են»:

Թէ՛ՕՒՈՍԻԱՅԻՑ մեղ հաղորդում են և հետեւելով. «Չը նայելով նաւահանգստի կառուցման չը սկսվելուն, դեռիք մեր քաղաքում սաստիկ թանգացել է. մի տարուց յետոյ գուցէ նոյն իսկ քաղաքի արուարձաններում աղատ տեղ չը մնար: Բաղմաթի հոյակապ շինութիւններ են կառուցվում: Գուցէ երկաթուղու աւարտվելուց և նաւահանգստի պատրաստ լինելուց յետոյ՝ առևտուրը կրկին կը կենդանանայ»:

ԱՐՄԱՆԻՅԻՑ մեղ գրում են. «Կուբանեան շրջանի շատ տեղերում կենդանիների մէջ հիւանդութիւնների տարածվելուն արգելք դնելու համար դեռ անցեալ այնպիսի սկզբնեղից խիստ կատարուն էր նշանակված շրջանիս մի քանի կենտրոններում: Կառավարչական անասնաբոյժի ըր հաստատում են, որ հիւանդութիւնները դողով իրեն ունեն այդ կողմերում մինչև այսօր էլ, կենդանիների այդ ցուների ամենապատանդաւորն է «չուժա» անվան հիւանդութիւնը: Տեղական վարչութիւնը պահանջել է ժողովրդից, որ կոտորէ հիւանդ անասուններին, սակայն ժողովուրդը առարկում է թէ հիւանդացած կենդանիներից միայն 50% է զոհվում տիրող հիւանդութեանը, այն ինչ 95% կրկին առողջանում է: Յուլիսի 14-ին Եկատերինօպոլում նստող շրջանապետը Բալի Մայիօպ քաղաքը և պահանջել է որ ժողովուրդը յանձնէ իրան հիւանդ կենդանիները»:

Մեղ գրում են ԱՐՄԱՆԻՅԻՑ հետեւելով. «Այս տարի ամբողջ Կուբանեան շրջանում դարձան անձրեկին յաջորդեցին ամառնային հով և անձրեկային օրերը, հակառակ անցեալ տարվայ այդոյ շրջերին: Այն ինչ Ռուսաստանի ներքին նահանգներից գտնդատվում են հացի պակասութեան մասին, Կուբանեան շրջանում հացահատիկների առատութիւն է տիրում: Ռուսաստանի հարաւային նահանգներից հաղարարը ուսու դիւրացիներ իրանց ամբողջ ընտանիքներով, հաւաքվել էին շրջանիս ցորենի, գարու, հաճարի և խօտի դաշտերը հնձելու նպատակով: Այդ մշակներից աղամարդիկ վարձվում էին օրական 3 բուլլի 20 կօպէկով, իսկ կանայք՝ 2 բուլլի 50 կօպէկով»:

Մեղ գրում են ԱՐՄԱՆԻՅԻՑ, որ այդտեղից հայկաթօլի երկաթու ծխական-ուսումնարանների հարցաքննութիւնները այս տարի շատ աջող անցան և մասունները իրանց պատասխաններով ապացուցին թէ ուսումնական տարվայ ընթացքում մեծ առաջադիմութիւն են արել:

Ներսէս Առաքելեանցին Դաւիթ քաղաքացած յուսահատ դրութեան մէջ հոգեպաշտեան կիրակի օրը (1803 թ.) Դանիէլի մօրուքը ամբողջ տալի: Թուր ևս մտք թթափելով այդպիսի ստորագրած բանաստեղծական վեղարակի զլիւսին, Դաւիթ հեղաբանում է դարձեալ. «Չէ, ուսմանին կան չի, որ զան քեզ օգնեն»:

Ինչ տպաւորութիւն կարող էր թողնել ակաւատանների վրա այդ տարվի բարբարոսութիւնը, դժուար չէ եզրակացնել: Իրանք Դաւիթեանց հիւսիսափայլեցին Դաւիթ անձնաւորութիւնից: Գեղարքալիքը պատճառեց նրանց կաթողիկոսի այդ արարքը... Սակայն Դաւիթ մնում էր կաթողիկոս և Լուսաւորչական աթոռը տարուբերվում էր երկու զօրքի մէջ՝ պարսից և ուսաց...:

Վերջապէս Մարաղայի խանի յորդորմամբ Հիւսիս խան սարդարը միջնորդում է Շահին և ըստանում է Դանիէլի աղատութիւնը և կաթողիկոսութիւնը: Այժմ Դանիէլն է մանում Էջմիածին պարսից զինուորների ուղևորութեամբ: Դաւիթն մնում էր, կաթողիկոսարանի բանալին յանձնելով Դանիէլին, ասել. «առ կաթողիկոս եղեք ևս օրանից մի բան չահիցի, դու ել կը շահվես»:

(Կը շարունակվի)

Միջ գրում են հետևեալը. «Նոր-Բայազէտ գաւառի մօտ 36 հայոց գիւղերում ոչ մի ծխական չկայ: Յանկալի էր, որ թեմական տեսուչն անցնէր այս կողմերը և աշխատէր շրջաններ բանալ. այդ նրան անտարակոյս կապուղիք, որովհետեւ Նոր-Բայազէտի կողմերի գիւղերը շատերը հեշտութեամբ կարող են դարձնուիլ պահել»:

ՆՕՎՈԶԵԿԱՍԿ քաղաքից մեջ գրում են. «Վօրոնի ժող 73 վերստ հեռավորութեամբ գտնվի Նովո-Վոլոդկայի, երկաթուղու գծի վրա գտնվող Լէսկի կայարանի մօտ, Պետրոսկայայ գիւղն այրվում է: Մօտ 75 խրճիթներ բռնված են արդէն կրակի բողբոջով: Հրդեհը հանգցնելու հնար չը կայ: Հիւսիսից քամի է փչում և շուտով հրդեհը ամբողջ գիւղը կոչնչացնէ: Այս գիւղը մօտ 400 խրճիթներից է բաղկացած և գիւղացիք ոչ մի միջոցի չեն դիմում հրդեհը հանգցնելու համար: Ում խրճիթն այրվում է, նա ծածրակը քորելով և գլուխը ցած դնած լայն է և ապշած նայում է հրդեհին: Իսկ մի խումբ գիւղացիներ, որոնք խրճիթները դեռ են հեռու են գտնվում հրդեհից, կանգնած դրոշմներ են անում. ոչ մի մարդ փորձ չէ փորձում գտնել հեռու խրճիթները ապահով պահել կրակ ընկնելուց: Երբ այրվում է մի խրճիթ, որի մէջ սուրբ պատկերներ կան, բաժնիկները ապշած բացականչում են. «Смотрите братцы, богъ горитъ» (նայեցէ՛ք եղբայրներ, աստուածները այրվում են): Ուսու ռասիկը սրբերի պատկերները աստուածներ է համարում»:

Կառավարիչ սենատին ներկայ 1891 թվ. մայիսի 13-ին տուած Բարձրագոյն հրամանով՝ Անդրկովկասեան երկրի, Կարսի և Թերեքի շրջանների տեղական ազգաբնակչութեանց պէտք է հաւաքել 2400 հոգի ղեկավարութեան համար: Այդ 2400 մարդիկ հետեւալ կերպով են բաժանված նահանգների վրա. Թերեքի նահանգում 903 օսերից 100 հոգի և 87 հրէաներից 7 հոգի, Գալուստանից 136 հոգուց 11 հոգի, Գարսի նահանգում 385 հոգուց 32, Թիֆլիսի նահանգում, Զաքաթայի շրջանի հետ միասին 7994 հոգուց 667, Քուրդիստանի նահանգում 8,678 հոգուց 725, Գանձակի նահանգում 3,865 հոգուց 322, Երևանի նահանգում 5,933 հոգուց 495, Բաքուի նահանգում 486 հոգուց 41: Ընդամենը ամբողջ Կովկասից 28,474 հոգուց 2,400 հոգի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՐԱՆԻԱԿԱՆ ՀԱՐՑ ԵՒ ՊԱՐՆԵԼ

Յուլիսի 11-ին (23-ին) Գուբլինում բացվեց Պարնէլի նախաձեռնութեամբ հրաւիրված իրանական ազգային միութեան համագումար ժողովը: Պարնէլին ողջունելու համար ժողովիկն էին կղզու բոլոր մասերի ներկայացուցիչները և Պարնէլական կուսակցութեան բոլոր տաղանդաւոր կամ աղքատներին ունեցող անդամները: Նախագահում էր ինքն Պարնէլ: Նիստը բանալով, Պարնէլ յայտնեց թէ համաժողով հրաւիրելու նպատակն էր ընդունելու ենթակից իրանական կուսակցութեան համար իր նոր կազմած պրոգրամը և ժողովի հաւանութիւնն ստանալ այդ ծրագիրը գործադրելու համար: Իսկապէս Պարնէլի կազմած նոր ծրագիրը շատ չէ դանադանվում 1882 թվ. հին ծրագրից: Բայց այդ ժամանակից, ընտրողական իրաւունքի ընդարձակման պատճառով, յարաբերութիւնները բաւական սուր կերպով փոխվել են, և այդ պատճառով նոր ծրագիրը պէտք է աւելի դժուարեցանալ: Նոր ծրագիրը պէտք է աւելի դժուարեցանալ: Պարնէլ, այն է ազգային ինքնավարութիւնից և կալուածական ընթացիկ, պէտք է աշխատել որ մեծ ուշադրութիւն դարձնուի բանօրների շանքի և արդիւնաբերութեան վրա: Կառավարութիւնը յայտնել է, որ առաջիկայ պարլամենտական նստաշրջանում ինքն տեղական վարչութեան մի նախագիծ կառաջարկէ պարլամենտին: Ինքն Պարնէլ ուրախ է, որ պարլամենտին մի պարզ թել կառաջարկվի:

Պարնէլի ձախ վերջանալուց յետոյ, ժողովը սկսեց ընդունելու ենթակից նոր ծրագրի առաջին կէտերը: Առաջին պարագրաֆը, այն է ազգային ինքնավարութիւնը, առանց վիճարանութիւնների ընդունելուց: Այդ պարագրաֆում, ի միջի այլոց ասված է, որ իրանական պարլամենտը պէտք է վերահսկելու կատարելաւ իրաւունքը:

Եւ պէտք է վերահսկելու կատարելաւ իրաւունքը ունենայ իրանական բոլոր գործերի վրա և որ նրա հրատարակած օրէնքների կատարումը կարող է խախտել միայն թագի կամ նրա ներկայացուցչի՝ Veto-ն: Ապա իրանական զորքերը չեն պէտք է գտնվել լորդ-փոխարքայի հրամանատարութեան ներքոյ և պարլամենտական կանգնուածներին չեն պէտք է թոյլատրվի պաշտօններ ընդունել կայսերական կառավարութիւնից, մինչև որ հիմնված չի լինի իրանական պարլամենտը: Հորդային ընթացիկ և տեղական ինքնավարութեան հարցերը երկրորդ վիճարանութիւնների առարկայ դարձան, բայց վերջ ի վերջոյ Պարնէլի խառնադրութեամբ ընդունվեցան: Ապա ընտրողական իրաւունքի ընդարձակման, իրանական արդիւնաբերութեան դարգացման, ազխտացիայի ժամանակ անարդար կերպով աքսորված արքայադուրերի վերադարձման վերաբերեալ մնացած առաջարկութիւնները առանց դիմադրութեան ընդունվեցան: Երեկոյան մի բազմամարդ ժողով կայացաւ Լէյնստէրի դահլիճում: «Միասնութեամբ են», — ասեց Պարնէլ այդ ժողովում: — Նրանք, որոնք կարծում են թէ Անգլիան անկեղծ կերպով սիրում է իր լանդները և իրանականներին: Այդ սերը սովորաբար միայն այն ժամանակն է պատայայտվում, երբ իրանական սպառնում է կուր բոլոր միջոցները, որոնցով սովորաբար օգտվում են բարեկիրթ մարդիկ: Իր ճառը նա վերջացրեց հետեւեալ խօսքերով. «Եթէ ընտրութիւնների ժամանակ մենք Վատերօսի դրութեամբ կը համենք, այն ժամանակ աւելի լաւ է, որ մեռնենք որպէս Նապոլեոնեան հին գլխաւորն այն համոզմունքով, թէ մենք փրկեցինք մեր հայրենիքը պատերազմէ»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Որպէս Լոնդոնից հաղորդում են, իտալական թագաժառանգը ներկայ էր յուլիսի 16-ին Լոնդոնի Լորդ-Մէրի տուած ճաշին, ուր հրաւիրված էին մօտ 60 պատուաւոր հիւրեր: Լորդ-Մէրը առաջարկելով իտալական թագաւորական դոյզի և թագաժառանգի կենացները, ասեց. «Այժմ իտալիան ընդհանուրի ուշադրութեան առարկայ է դարձել: Անգլիացիները խորին յարգանքով են վերաբերվում դէպի մի երկիր, որը կարողացաւ անկախութիւն ձեռք բերել և ի սրտէ ողջունում ենք իտալական թագաւորի որդուն, որը խաղաղութեան անկեղծ բարեկամ է և խոստովանում է զօրեղ ղեկավարական նաւատորմի նշանակութիւնը»:

— Լրագիրներին հեռագրում են, որ Երուսաղէմի բարբին դիմել է հեռագրով Օղէսայի բարբին խնդրելով զգուշացնել հրէաներին Պալէստին գաղթելուց, եթէ ցանկանում են թշուառ դրութեան մէջ չընկնել:

— Դիւլօն և Օրբայն իրանական պատգամաւորները, որոնց այսօր արձակեցին բանտից, յայտնեցին որ իրանք այժմ Պարնէլի դէմ կը գործեն:

— Մի քանի նշաններով երևում է, որ անգլիական միջնորդութիւնը ցանկանում է համաձայնութիւն կայացնել Ֆրանսիայի հետ Նիպոտոսի վերաբերմամբ: Նիպոտոսից հեռանալ ի հարկէ, Անգլիան չի կամենայ: Ասում են մինչև անգամ, որ Լոնդոնից տեղեկացրել են Ֆրանսիական կառավարութեանը, որ Ֆրանսիան Նիպոտոսի պատճառով իրար է Անգլիային անբաւականութիւն պատճառում, քանի որ Ֆրանսիան փարաւորներ է երկրի համար ամենին միտք չունի սուրբ մերկացնել: Երկու պետութիւնների համար ևս ձեռնարկ է վեճը համաձայնութեամբ վերջացնել: Թող Ֆրանսիան հանգիստ թողնի Անգլիային Նիպոտոսում, իսկ ինքն փոխարենը թող Միջերկրական ծովում լաւ վարձատրութիւն ստանայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«ДЕНЬ» լրագրում ասված են վիճակադրական տեղեկութիւններ Պետերբուրգում գոյութիւն ունեցող պարբերական հրատարակութիւնների մասին. 116 հրատարակութիւններ ունեն 200-ից մինչև 2,000 բաժանորդներ. 10,000 բաժանորդներից աւելի ունեն միայն 16 հրատարակութիւններ, որոնցից երկուսը ունեն 25-ից մինչև 35 հազար բաժանորդներ, մէկը 60 հազար և մէկը 120 հազար:

Հարֆիլդում ի պատիւ գերմանական կայսրի լորդ Սթրեքի տուած կօնքերով ժամանակ իտալական մի յայտնի լրագրի թղթակից ծառայողը ֆրանսիական ժողովուրդը ռուսաց ժողովուրդի հետ:

յի դեր էր կատարում, նուազածունքին նօտանքը լաւանկով: Մի ժամից յետոյ իտալական լրագրից հեռագրով ստացաւ հանդիսի մանրամասն նկարագրութիւնը: Մի ուրիշ լրագրի աշխատակից նախ վրա խոհարարի օգնականի դեր էր կատարում, երբ վերջէն կայսրը գնում էր Լոնդոն:

Վիեննայում նորերս մեռաւ մի պառուս կին, որը զարմանալի արագութեամբ կարողանում էր դատարկել գինու շիշեր. ինչպէս պատմում են, մի ամսվայ ընթացքում ինքն միայնակ խմում էր մի տակաւոց աւելի գինի: Նա կտակել է իր մայրենի քաղաքին 200,000 ֆրանկ այն պայմանով, որ իրան թաղին որքան կարելի է հեռու իր հանգուցեալ ամուսնուց:

Պարիզի դատարանում շուտով պիտի քննվի մի հետաքրքիր գործ, որը առաջ է եկել մի «փոքրիկ» թիւրիմացութիւնից. Պարիզի յայտնի լրագրապետներից մէկը, որի անունը առ այժմ չեն տալիս, ունէր մի սիրունի, որի հետ ուզում էր պսակվել. մի անգամ սիրունին չեկաւ նշանակված ժամագրութեանը. լրագրապետը, բարկացած գնաց ամարային թատրոններից մէկը և մեծ եղաւ նրա դարմանը, երբ այնտեղ քաղկաթոնների առաջին կարգում տեսաւ իր սիրունին մի պարոնի հետ նստած. նա մօտեցաւ նրանց և սկսեց պախարակել տիկնոջը: Վերջինի հետ եղող պարոնը ուզում էր պաշտպանել նրան, բայց լրագրապետը թոյլ չը տուեց նրան մի խօսք անգամ արտասանել և ըսականց հայտնել նրան. «բայց պարոն» — բացականցեց տիկնոջ ուղեկիցը. «բաւական է պարոն», — ընդհատեց նրան լրագրապետը, ինչ իրաւունքով էք դուք բերել թատրոն իմ սիրունուն: — «Բայց խնդրեմ...»: — «Գուց ղեռ համարձակվում էք ինձ պատասխանել, այս ասելով լրագրապետը սկսեց ծեծել տիկնոջ ուղեկիցին: Վերջապէս լրագրապետը ձեռքից և ասեց նրան. «Վերջապէս դուք ինչ էք ուզում ինձանից, ասա՛ր ևս այս տիկնոջ ամուսինն եմ»: Եւ լրագրապետին անմանօթ ամուսինը դատ սկսեց նրա դէմ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԿՐՈՆՇԱՏԱ, 24 յուլիսի: Անցեալ գիշերը Պետերսօֆից դուրս եկան Ֆրանսիական նաւատորմի «Surcouf» և «Lance» նաւերը: Առաւօտեան Ֆրանսիական նաւատորմի վրա սկսեցին ձանապարհ ընկնելու պատրաստութիւններ տեսնել ժամը 8-ին հրաժարականի թնդանօթաձուլութիւն եղաւ, և շուտով նաւատորմի նաւերը ուղևորվեցան դէպի Բիթրիէ, ուր անուշ կը վերցնէին Ուրբաթի նաւատորմը կերկայ Ռէլէ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յուլիսի: Երէկ, երեկոյան 7 ժամին, թագաւոր կայսրը և թագուհին կայսրուհին Օգոստոսիւս Երկրորդի Պետերսօֆից զբոսայիտի կրօնապատեան նաւահանգիստը, ուր անցան «Дерзавы» նաւի վրա՝ Ֆինլանդիա գնալու համար: Գնորդալ Սկաւոն դիւստոր շտաբին կից հեծելազոր մասի գլխաւոր է նշանակված, գնորդալ Պրոկոպէ Ֆինլանդիայի մեծ իշխանութեան մինիստրի օգնական է նշանակված, գնորդալ կառուարս 15-րդ հեծելազոր զորաբաժնի հրամանատար է նշանակված: — Երէկ երեկոյան, Պետերսօֆից ժամանեց սերբիական թագաւորը և գնաց Ձմերային պալատը, ուր ընկալարան է պատրաստված թագաւորի և նրա սկզբնական համար: Թագաւորը զբօսանք կատարեց փողոցներում, որոնք նրա գալու պատճառով, զարգարված էին ռուսաց և սերբիական զրօշակներով: — Երէկ երեկոյան ծովապետ Ժերմէ, Ֆրանսիական նաւատորմի 40 օֆիցէրներ և 16 ուսուցիչ-օֆիցէրներ ուղևորվեցին Մոսկու: Գրանց հիացմունքով ձանապարհ գցեցին: — «Правительственный Вестник» լրագրում ասված է. «Յուլիսի 16-ին Պետերսօֆից պալատում եղած ճաշին, թագաւոր կայսրը, բաժակը բարձրացնելով, արտասանեց հետեւեալ խորհրդարան խօսքերը. «Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնոսի, Ֆրանսիական նաւատորմի ծաղկեման, և մասնաւոր ծովապետ Ժերմէի նաւատորմի կենացը»: Թագաւորական այդ խօսքերի հետեանք էին մէկ երկար շարք չը տեսնված և խորին իմաստով լի մեծարանքները Ֆրանսիական նաւատորմի ներկայացուցիչներին: Նրանց ամբողջ 12 օր մեջ մօտ միալու միջոցին: Եթէ որ և է մէկը, երբ և ինչ կարող էր համոզվել, թէ ինչ ծաւալ է առնում Ռուսաստանում նրա ինքնակալ Տիւրք խօսքերը, զրանք հնչեց Ֆրանսիական փառաւոր նաւատորմի մեղադրանք մեկնում ծովապետներին: Երկար կը լինի թել գէպի ֆրանսիական ժողովուրդը ռուսաց ժողովուրդի հետ:

Ղի կողմից արտայայտված ջերմ և անկեղծ համակրութեան արտայայտութիւնները, և այդ 12 օրվայ յիշատակութեան արժանի ուրախութիւնները չը խանգարելու որ և է մէկի համար անխորժ ակնարկով: — Պաշտօնական հեռագիրը յայտնում է, որ յուլիսի 20-ին թագաժառանգ Յեսարիլի մօտ Օրէնդուրդեան նահանգի սահմանները: Սահմանի վրա կառուցված կամարի մօտ, Նորին Բարձրութեանը դիմաւորեցին Կադանի գիւնտորական շրջանի զօրքերի հրամանատար գնդաւորաւոր Մէչչէրինօ, իշխանաւոր անձինք և զանազան պատգամաւորութիւններ աղ ու հացով: Կադանից քաղկաքից պատուաւոր պաշտակալներ ժողով անցնելուց յետոյ, Նորին Բարձրութիւնը, ուղեկցութեամբ թիկնապահների և հարկւր մանուկ-կադանների, օրէնքուրդեան տրակտով ձանապարհ ընկաւ: Ձանապարհի վրա ստանդանների ամբողջ աղջկանակութիւնը հիացմունքով էր դիմաւորում թագաժառանգին: Յուլիսի 21-ին Նորին Բարձրութիւնը ժամանեց Տրոյցկ, ուր դիմաւորեցին նրան քաղաքի կողմից եկած պատգամաւորութիւնները, մէչչանների հասարակութիւնը, մահմետական հոգեւորականութիւնը, բաշկիրները, և նոյնպէս Պէրմ քաղաքի Պէրմի դէմաւորի և Չէլիաբինսկ քաղաքի կողմից եկած պատգամաւորութիւնները: — Յուլիսի 22-ին, թագուհին Կայսրուհու անուանակոչութեան օրը, վաղ առաւօտ պատարագ մատուցվեց մաղթանքով, Նորին Բարձրութեան, բոլոր պաշտօնատար անձանց և պատգամաւորների ներկայութեամբ: Մաղթանքից յետոյ զօրահանդէս եղաւ: Առաւօտեան մօտ 2 ժամին թագաժառանգը ձանապարհ ընկաւ Վէրնիէ-Ուրալսկ, ուր գիշերեց, և երէկ առաւօտեան ձանապարհը շարունակեց: Ձանապարհ ընկնելուց առաջ, Նորին Բարձրութիւնը ընդունեց պատգամաւորութիւնները, տաճարում էր և զօրահանդէս արաւ: — «Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ յուլիսի 23-ին Պարիզից Ֆրանսիական դեսպանատունն են ուղարկել այնտեղի Աստուածամօր տաճարում պահված և Կրիմի պատերազմի ժամանակ Եվպատորիայում վերցրած խաչկառները: Այս օրերս խաչկառները Եվպատորիա կուղարկվին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յուլիսի: Նախաճաշից յետոյ, Ձմերային պալատում, սերբիական թագաւորը սկիտայով այցելեց Ալէկսանդր-Նէվսկայա միւնաստանը, ուր սուրբ դռներում դիմաւորեց նրան միւնաստանի վանահայրը հոգեւորականութեամբ, իսկ տաճարում — լադոգեան եպիսկոպոսը, որը սուրբ ջուր սրկեց թագաւորի վրա: Միւնաստանից յետոյ թագաւորը այցելեց Կադանեան տաճարը, տեսաւ տաճարում իշխան Գօլնիչէ-Վուտուզով: Սօլնիսկու գերեզմանը և այցելեց խաչկէմեան մայր եկեղեցին: Երէկ առաւօտեան թագաւորը այցելեց Պետրօպոլիսի մայր եկեղեցին, ուր հոգեհանգիստ կատարվեց կայսր Ալէքսանդր II-ի և Մարիա Ալէքսանդրօվնա կայսրուհու համար, այստեղ թագաւորը արժաթէ պսակ դրեց Ալէքսանդր II կայսրի շիրմի վրա:

ՄՕՍԿՎԱ, 25 յուլիսի: Այսօր, առաւօտեան 11³/₄ ժամին, այստեղ հասան Ֆրանսիական ծովազնանները արտակարգ գնացքով, որի լօժօմօտիվը զարդարված էր զրօշակներով: Կայսրանում, դիմաւորելու համար, հաւաքվեցան քաղաքապետը, Ֆրանսիական ընդհանուր հիւպատոսը, Ֆրանսիական ցուցահանդէսի մասնաժողովի անդամները և ահագին բազմութիւն: Կայսրանից Ֆրանսիացի հիւրերը քառաձի կառքերով գնացին «Славянский базаръ», ուր նրանց համար բնակարաններ էին պատրաստված: Ֆրանսիական և ռուսաց զրօշակներով զարդարված փողոցներում հաւաքված ժողովուրդը ողջունում էր եկողներին հիացման աղաղակներով: Ծովապետ Ժերմէ, որը Ն. Ա. Ալէքսէիլի հետ էր նստած կառքում, ամբողջ ձանապարհի վրա զլիարաց էր, և ողջունում էր ամենքին: Զարդարված հիւրանոցում ուղևորված ամբողջ ձեռքերի վրա ներս տարաւ ծովապետ Ժերմէին: Բարձր պաշտօնատար անձանց այցելութիւն անելուց յետոյ, Ժերմէին յատկացրած ընկալարանում, ուր դրված է Կարնոսի պատկերը, Ֆրանսիական կրօնիայի պատգամաւորութիւնը ներկայացաւ «Славянский базаръ»-ում նախաճաշուց յետոյ, Ֆրանսիացի ծովազնանները գնացին կրէմլեան պալատը, թագաժառանգ Յեսարիլիչի սենեակները, գնդաւոր և կրէմլեան տաճարները և ապա գնացան պատմական թանգարանը միջին-աւարական ցուցահանդէսը այցելելու համար: Թանգարանի նախագահութեամբ գնացան երաժշտական խումբը,

Կերպերի մանկու և դուրս գալու ժամանակ, մար-
տեղից նուազեց: Յուրաքանչյուր մասնաժողովը,
Ֆրանսիական օֆիցերներին դրան մօտ դիմադրելով
և չընկալանալով նրանց ցուցանանքները, առա-
ջարկեց նրանց շամպայն և պտուղներ: Ֆրանսիա-
կան ծովափնային ծաղիկներով զարդարված
տրոյականերով զբոսնում էին քաղաքում: Ժամը
7-ին Ֆրանսիական ցուցանանքները քաղաքի
կողմից ձախ արվեց 120 հոգու համար. ձա-
չից յետոյ զինուորական բանակը կերթան. այն-
տեղից Ֆրանսիացի իրերը կը վերադառնան
ցուցանանքներ, ուր փառաւոր հրախաղութիւն կը
լինի և էկսպոնենտներին ընդհանուր անագին
«punsch» կը արվի:

10հոգու, 25 յուլիսի Համայնքները ժողովը
մերժեց կօչլինի առաջարկութիւնը, որի մէջ այն
միտքն էր արտայայտված, որ Ազգայնական և
Հեղեկատանի մէջ եղած յարաբերութիւնները
անբաւարար են և որ ցանկալի կը լինէր երկա-
թուղին մինչև կանգաւոր շարունակել: Հեղեկա-
տանի գործերի միջոցով օգնական Հորստ յայտ-
նեց, որ Ազգայնական ինտ արարեցութիւնները
լաւ են, որ էմբիլ զէպի Անգլիան բարեփոխելն է
վերաբերվում և որ նա վաստակ է, այլ անգլիա-
ցիներին անկախ դաշնակցին է և պարտաւոր է
խորհրդակցել Անգլիայի հետ միայն արտաքին
քաղաքականութեան հարցերում: Այս Հորստ
ասեց, որ էմբիլի առողջութիւնը լաւացել է և որ
կարելի է այժմ մի քանի երօպացիներ են

ընակվում, որոնք նպաստում են գործատուներ քա-
նայուն և առևտրի զարգացմանը: Որ և է փորձ
Անգլիայի կողմից՝ զոնի 1 միջոց տարածութեամբ
երկաթուղիական գիծ անցկացնելու զէպի Ազգա-
նիստան՝ կը մերժվի էմբիլից:

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԻՐԿՈՎԱԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ

Փոստային գնացքը ուղևորվում է

ԹԻՖԼԻՍԻՑ զէպի Բաթում . . 8 ժ. 40 ր. առաւ.
ԲԱՌՈՒՄԻՑ զալիս է Թիֆլիս . . 11 > 8 > երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ զէպի Բաթում . . 12 > 8 > երեկ.
ԲԱՌՈՒՄԻՑ զալիս է Թիֆլիս . . 7 > 40 > առաւ.

Ապրանքա-ճանապարհորդական գնացքը

ԹԻՖԼԻՍԻՑ զէպի Բաթում . . 3 ժ. 10 ր. ցերեկ
ԲԱՌՈՒՄԻՑ զալիս է Թիֆլիս . . 8 > > առաւ.
ԹԻՖԼԻՍԻՑ զէպի Գանձակ . . 9 > 45 > առաւ.
ԳԱՆՁԱԿԻՑ զալիս է Թիֆլիս . . 8 > 20 > երեկ.

ՈՒՌԱՍՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՂՆԱԽԻՐ

Հինգ-ՇԱԲԹի օրերը, երեկոյան 4 ժամին, ուղ-
ղակի լէյսով, Նովորոսիսկի վրայով:

ՇԱԲԱԹ օրերը, 8 ժամին երեկոյան, շրջական
լէյսով, բոլոր նաւահանգիստներին վրայով:

ԵՐԿՈՒՇԱԲԹի օրերը, 7 ժամին երեկոյան, ար-
տասնամասնան լէյսով զէպի Կ. Պօլիս:

Խմբագիր-հրատարակող՝ ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Բժշկականութեան մի ուսանող ՊԱՐԻՋՈՒՄ պատրաստ է հարկ եղած դիւրութիւն-
ներն ընծայել այն ամեն հիւանդներին, որոնք Պարիզ են գալիս իրանց ցաւերը զար-
մանելու, ցոյց տալով նրանց յարմարագոյն հիւանդանոցներ և ամենայայտնի բժշկինե-
րի անուններին վրա մասնացոյց անելով, մի և նոյն ժամանակ կատարելով և թարգմանի
պաշտօնը:

Հասցէն իմանալու համար դիմել «Մշակի» խմբագրութեանը: 1—6

Ա. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ երեցփոքը խնդրում է ցանկացողներին շնորհ
բերել նոյն եկեղեցու համար Աւետիք Հայկազարեանցի ծախսով շինած կամուրջի և
սանդուղքի օրհնութեան և բացման հանդիսին ներկայ գտնվելու, որ լինելու է կիրակի
օրը, այս յուլիսի 28-ին, առաւօտեան ժամը 9-ին: 1—1

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ կարգադրութեամբ ամինս 28-ին, կիրակի օրը, սուրբ
պատարագից յետոյ ժամը 12-ին պիտի կատարվի քաղաքիս կաթողիկէ սուրբ Աստուա-
ծածին (սուրբ Գէորգ) եկեղեցու նոր երեցփոխանի և հաշուառեսաց ընտրութիւնը,
ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նշանակեալ օրը
նոյն եկեղեցին՝ մասնակցելու ընտրութեանը:

Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգութեան վերադառնալ Յովհաննէս քահանայ Մար-
տիրոսեանց: 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶՐԱՆՑՔԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ յայտնում
է ի գիտութիւն շրանցքի այն արձանատուներին, որոնք զեռ չեն վճարել ջուր բանեցնելու
կամ շրանցքից օգտվելու համար նշանակված փողը, որ օգոստոսի 1-ից կը զարգարեցվի
նրանց ջուր մատակարարել: 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
յայտնում է սրանով որ ընկերութեան 1891 թվի անդամները կարող են ստանալ կենտրոնական
գրավաճառանոցից ընկերութեան հետևյալ հրատարակութիւնները.

- 1) Տօրառոյ—Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը:
- 2) Վալանէր—Հաւատարիմ Սովորներ:
- 3) Պէտաւոյցը—Լինհարդ և Գէորգուդ:
- 4) Նալ և Գամալանախ:
- 5) Ռօդընհարն—Նախ փոքրաւորը:
- 6) Սպիրի՝ Ուռնից Յովակի:

4—13

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգինաւորի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻՑ զէպի ԲԱՌՈՒՄ, չորեք-
շաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած
ԵՒ ՓՈՒՍԿԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս:

ԲԱՌՈՒՄԻՑ ՇՈՂՆԱԽԻՐ ԴՈՒՍԻՍ ԵՆ ԳԱՒԻՍ

Չորեքշաբթի, 17/29 յուլիսի	—	ՍՐԿԱՍԻ	—	ԲՕՇԷԼ
— 31 յուլիսի (12 օգոստոսի)	—	ԱՆԱՏՈՒՄ	—	ԳԱՐԻԲ
— 14/26 օգոստոսի	—	ՄԻՆԳՐԵԼԻԱ	—	ԺԻԲՈՒՆ
— 28 օգոստոսի (9 սեպտեմբերի)	—	ՍՐԿԱՍԻ	—	ԲՕՇԷԼ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ:
Տօմարներին գները ուղղակի երթևեկութեան Բաթումից զէպի Պարիզ իսկական գնից
պակսեցրած են:

Տեղեկութիւններն համար ճանապարհորդներին և բեռներին մասին թող բարեհաճն
դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱՌՈՒՄԻՍ պ. Գարանիճին, Նաբեհէֆույայ,
ԹԻՖԼԻՍԻՍ պ. Վիկտոր ԳԱՐՆՈՒՆ, Միշին-փողոցում, Նախկին զինեղալ Տէր-Ասատուրովի
տանը, ԲԱԳԻՌՄ, Սամսոն Դիլլաբովին, Կօլմբիակիսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՈՍԻՑ-
ՍԿՈՒՄ պ. Լուի Բընօին: 7—12 (Ե. Շ.)

ՊԱՆՍԻՕՆ ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԳԻՄՆԱԶՆԱԿԱՆ ՀԻՆԳ ԳՍԱՐԱՆՆԵՐՈՎ

Նորին գերագնացութեան կովկասեան ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի
կարգադրութեամբ յուլիս ամսի վեցից վերափոխվում է հինգ զատարանական ուսու-
նարանի պետական գիմնազիայի և բէալական ուսումնարանի ծրագ-
րով:

Պանսիօնում կանգնվում կրօն, հայոց եկեղեցական պատմութիւն, մեկնութիւն պա-
տարագի հայոց, հայոց լեզու (հայերի համար), ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատի-
ներէն, յունարէն, վրացերէն, թուրքերէն լեզուներ, թուրքաբանութիւն, պղծագրաւ, երկրաչափու-
թիւն, ընդհանուր պատմութիւն, ռուսաց պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն,
Ռուսաստանի աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, նկարչութիւն, գրութիւն, լուսա-
կան երգեցողութիւն, երաժշտութիւն, պար, մարմնամարզութիւն:

Պանսիօնում պատրաստվողները կարող են մասնի գիմնազիայի, բէալական ուսումնա-
րանի, Լազարեան ճեմարանի մինչև հինգերորդ դասարան. նոյնպէս զէմէմէրնի, տեխնիկա-
կան և այլ միջնակարգ ուսումնարաններում:

Աշակերտներն ընդունվում են թօշակաւորներ, կիսաթօշակաւորներ և երթևեկներ: Ըն-
դունելութիւնը կը սկսվի օգոստոսի 20-ից:

Հասցէն. Тифлиς, Сололаки, Вельяминовская улица, домъ Геворкова, № 11.
2—10 (Շ.)

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Զ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհորդ
հմուտ հաշուապահներ: Առարողները ստանում են ատոմս տաւոն եր:

Առարողի ուսուրկացը սոքա են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրա-
կան թուրքաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուրքաբանութիւն համընդհանուր, 5) Առևտրական թղթակցութիւն, 6)
Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) զեղադրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի
1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնա-
կարանում, Սոլոլակում, Աղէքսանդր Փրիզոնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և
Նազորեայա փողոցների անկիւնում, զեղադրանքի դիմաց: Ծրագիրը ու կանոնները
կարելի է ստանալ ՋՐԱՊԵՍ կըր. Տօփիանովների բանկային գրասենեակում և
կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմ-
նողին.—въ Тифлиς, С. П. Мануэльянцу.

8—25 (Ե. Շ.)

ԱՐՄԱԻՐԻ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ միգրանտ զարդի համար հարկաւոր է փ-
ուսուցչուհի հայոց լեզուի, թուրքաբանութեան, վայելչագրութեան, ձեռագործի և փ-
րակայութեան. ընդամենը 25 դաս. ռոճիկ 505 ր:

Կը ստանայ բնակարան և վառելիքայտ:
Դիմել Արմաւիր բարեկարգ և հոգաբարձութեան նախանգամ քահանայ Թուրեան.
ցին: 2—3

ПИТАТЕЛЬ-
НЫЙ
НАПИТОКЪ

ԿԱԿՈ
Կիստայի
Քակաո
Զլոկեր

Թաղ նշանակ է միայն 4 կողմ.
Բալկանյան պարագաւորութիւն.
ՄԱԳՈՐ ԵՒ ՄՆՆԱՐԱՆ ՓՈՇԷ.
Առաջարկվում է առողջացողներին
և երեխաներին համար.

ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտտո սիստեմայի, որոնք իրանք
կրկնի են ուղղում ու օժտում
Գազի համար — ածուխից,
— նաթթից,
— անտաքալայից,
— կէրօսինից
1/2-ից մինչև 120 ձիու ուժի
Շոգինաւորների մեծ արարու-
թեան.

ԳԱԶԱՅԻՆ ԼՈՒՍԱՌՈՐԻՓԻՆԻ

Ուժի հասցնել տարածութեան
միջով.
ՏՆԵՓՈՒՆԵՐԻ ՍԱՐԳԵԼԻ.
Եկեղեցական նշաններ.
ՋԱՆՉԱԿԱՆԻ
ԳԱՂԱՆՈՊԱՆՍԻԱՆ.
Եկեղեցի.
Աղօթաւորների, Եկեղեցիների,
ՇԱՆՈՐԱՐԱՆԻՆԵՐ.
Նախանգամներ և ծրագիրներ ձեռ-
ագրաւ.

ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ
30—50 (Շ.)

ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ
35—100 (Ե. Շ.)

ՐՈՍՏՈՎ
ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ
30—50 (Շ.)

ՐՈՍՏՈՎ (ԳՈՐԻՎԱ)
ՄԵԾ Սաղօփայա փողոց,
24
ՐՈՍՏՈՎԵՆ (на Дону)
ВР. ПЛЕБОВЫ
Большая Садовая, 24.